ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38*** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի հուլիսի 20-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-3»*** ծածկագրով պայմանագրում **2017 թվականի նոյեմբերի 10-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Կատարողի կողմից առաջարկվել է երկարաձգել հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի 1.3 կետում և N 2 «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2017 թ-ի դեկտեմբերի 14-ը:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 60-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-3» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «10» 11 2017 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, մի կողմից, և "ԿՈՏԱՅՔՆԱԽԱԳԻԾ" ՍՊԸ-ն, ի դեմս Ա. Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի հուլիսի 20-ին կնքված պետության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների պետական գնման N **«ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-3»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 60-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.2. Պայմանագրի 1.3 կետում **«15 նոյեմբեր 2017 թ.»** բառերը փոխարինել **«14 դեկտեմբեր 2017 թ.»** բառերով:

1.3. Պայմանագրի և N 2 «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում **«15.11.2017թ.»** բառերը փոխարինել **«14.12.2017թ.»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ մշակույթի նախարարություն	«ԿՈՏԱՅՔՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան,
Կառավարական շենք N 2,	Բարեկամության 2
հեռ.՝ (011) 58-51-78	հեռ.՝ (0222) 25444, (096) 788008,
ՀՎՀՀ 02508054,	էլ. փոստ՝ abovyanihhg@gmail.com
h/h 900011012920	ՀՎՀՀ 03503627,
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	h/h 163088121476
գործառնական վարչությունում	"Հայէկոնոմբանկ" ԲԲԸ,"Աբովյան" մասնաճյուղ
Աշխատակազմի ղեկավար	Տնօրեն
_____ Ս. Մուրադյան	_____ Ա. Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ